




“ԹՈՂ ՏՈՒՔ ԾԱՐ ՏՂՈՅՆ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԳՈՒԿ. ԺԸ. 46.

ՀԱՏՈՐ Ժ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒՐ 1, 1881

ԹԻՒ 2



ԲԱԿՈՏԱՆԵՐ

Բակոտա բաւր Սանքրիդ լեզուէն է և կը նշանակէ սրբարան կամ նուիրատեղի : Եւրոպացիք այս անունը կուտան արեւելեան և հարաւային Ասիոյ բոլոր մեհեաններուն : Այսպիսի մեհեաններ շատ կան Չինաստան, Հին տոչին և Պիրմահ : Մեր առաջին իջին պատկերը Պիրմահի բակոտաներէն միոյն պատկերն է :

Բակոտաներն ունին ընդհանրապէս քանի մը մաս . նախ սինազարդ դաւիթ մը , ապա արտաքին նուիրատեղի՝ քրմոց համար , և ներքին նուիրատեղի , կամ սրբաբան՝ զիստար կուռքին համար : Չինաստանի բակոտաներն երբեմն ընդարձակ բակի մէջ են : Չորօրինակ Գոնաւի բակոտային բակն է 390 ոտք երկայն և 250 ոտք լայն , և ունի շուրջա՛նակի խոցեր քրմոց համար : Բակին կեդրոնը , բարձրաւանդակի վրայ , շինուած են և ընթ բակոտաներ որոց խրաքանչիւրը 1089 քառակուսի ոտք է , և երկայարկ : Չինաստանի մէջ գրեթէ ամէն քաղաք կը գտնուի մի կամ աւելի բակոտա : Գրեթէ ամէնը ձեւով կը նմանին իրարու , բայց կը տարբերին մեծութեամբ : Ոմանք շատ բարձր են , ամանք եւս մինչև ութայարկ և իննայարկ : Յարկերուն լայնութիւնը և բարձրութիւնը գէտլի վեր երթալով կը նուազին : Խրաքանչիւր յարկ ունի ապիկած աղիւմնե-

րոյն բակոտաներն են խոմաոյ որ իւրաւատի գետին եզերքը , Աւա քաղքին գրեթէ գիմացն է , և Ծոմասուի Բէկու : Առաջնայն շրջապատն է գետնին վրայ 944 ոտք , և ունի շուրջանակի աւելի քան 802 քարեղէն սրներ , իւրաքանչիւրն 3 ոտք բարձր : Ծէնքն է 160 ոտք բարձր : Երկրորդին արամաղիծն է գետնին վրայ 393 ոտք և է 361 ոտք բարձր :

ՉՄԵՌ ԱՏԵՆ ԶՈՒԿ ՈՐՍԱԼ

Գիշեր կը խորհին թէ մարդոց ուսելիքին սրջափ մեծ մտաը ծովէն կ'ելլէ : Հազարաւոր նաւաստիներ ձկնոր-



ՆՈՐ ՍՈՐՏ ԵՒ ՆՈՐ ԿԵԱՆՔ

Այս նոր տարւոյ մէջ , յոր մտանք ամսէ մը հետէ , կը վայլէ որ նոր բաներ ձեռք բերելու համար նոր ջանքով աշխատինք :

Առաջին և կարեւորագոյն բանն է նոր «Կր» : Աստուած իւր խօսքին մէջ կ'ըսէ թէ մեր սիրտերը չար են : Երբ անաչառ կը քնենք մեր սիրտերը , կը գտնենք որ Աստուծոյ այս խօսքը ճշմարիտ է : Արդարև մեր խորհուրդներուն և մեր նպատակներուն շատը չար է : Այն է մանաւանդ չարագոյն , որ չենք ուզեր ներում ընդունելու

համար Աստուծոյ կողմէն ցուցուած ճամբան ընտրել , այսինքն գիմել Գրիստոսի ոտքը : Երբ Աստուած կ'ըսէ . «Որդեակ , տուր ինձ սիրտդ ,» մենք կը դժկամակինք հնազանդել անոր ձայնին :

Ապա կարօտ ենք նոր սրտի : Նոր սիրտ կըրնանք ստանալ հաւատարով Յիսուսի : «Չեզի նոր սիրտ պիտի տամ ,» կ'ըսէ Աստուած , «ուձեր ներքի գին նոր հոգի պիտի գնեմ , և ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ , ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ :» Եթէ ինձ դրենք մեր երկնաւոր Հօրմէն այս մարմնեղէն սիրտը , Հայրը կու տայ մեզ գոյն : Եթէ ենք դեռ հին , չար սրտին ազդեցութեան ներքև , ո՛չ ապաքէն հիմա , նոր տարւոյ սկիզբը , պատեհ ժամանակ է դառնալու առ Աստուած , և խընդրելու անկէ նոր սիրտ :

րով դուրս ցցուած քիւ , ընդհանրապէս զանգակներով զարդարուած : Բակոտաներուն հաշակաւորագոյնը Չինաստանի մէջ շինուեցաւ Նանքին 1413—1432 , բայց քանի մը տարի առաջ քանդուեցաւ Թիբեթի աւազտամբութեան ատեն : Այս բակոտան շինուած էր յախճապակիէ , ութանկիւնի , 210 ոտք բարձր , և էր ասանայարկ . իւրաքանչիւր յարկ ունէր ձեմելի , և սանդուղները շինուած էին պատերուն մէջ :

Պիրմահի բակոտաներն են շատ ընդարձակ քառակուսի շէնքեր : Մեծա-

ստութեան կը պարապին Սմերիկա , Նիւֆաունտլէնտ կոչուած կղզոյն եզերքը և ծովուն ուրիշ մասերուն մէջ : Էսթիմացիք և ուրիշ ցեղեր որ կ'ապրին հիւսիսային կողմերը , շատ նեղութիւն պիտի կրէին ուսելիքի կողմանէ , եթէ առատ ձուկ և փոկ չգրանուէին այն ցուրտ երկիրներուն մէջ : Վերի պատկերին մէջ կը տեսնուի ձկնորս մը որ ձուկ կը բռնէ ճանկով : Չորը ծածկուած է սառով , բայց ձկնորսը սառին մէջ ծակ մը բանալով կընայ ուսելիք հայթայթել խընտանեաց :

Նոր տարին անտարակոյս պատեհ ժամանակ է :

Երկրորդ՝ պարտինք սկսիլ նոր կեանս : Եթէ արդէն փնտաւած և գտած ենք նոր սիրտ , կ'ապրինք նոր կենսօք : Ըսել կ'ուզեմ թէ պարտինք ջանալ , օգնութեամբն Աստուծոյ , մեր այս տարուան վարքն ընել լաւագոյն քան հերուանը : Պարտինք ջանալ ունենալ աւելի սէր առ Հայրն երկնաւոր և առ ամենայն մարդիկ : Պարտինք ջանալ ընել մեր վարքը նմանագոյն վարույ մեր փրկչին : Մեր բարքն ըլլալու է աւելի աղօթասէր , և աւելի սնունդ

առնելու ենք այսուհետև քան յառաջ Աստուծոյ օրհնեալ խօսքէն : Եթէ մեր անցեալ տարիներուն մէջ չնորհօքն Աստուծոյ բարի կեանք վարեցինք, այս տարեգլխուն կրնանք դէժ նոր ընթացք մը բռնել աւելի արագ և աւելի ուժով յառաջ երթալու ուղղութեան ճամբուն մէջ : Իսկ եթէ բարի կեանք վարած չենք ցարգ, փութալու ենք բողբոլկն դուրս ելլել հին շաղէն, և մանկ զԱստուած սիրելու և անոր պատուիրանաց հնազանդելու նոր շաղիք :

Չե՞նք կրնար այս տարին ընել նաև քաղցր-խեղձ արք : կրնանք, և այս ըլլալու է միշտ մեր նպատակը : Եթէ անցելոյն մէջ չար բան մը կ'ընէինք, կրնանք այսուհետև դադարիլ այն բանն ընելէ : Մի կարծէք, արդայք, թէ, որովհետև մանուկ եք, ձեզի համար ընելու բան չկայ : Դուք չէք կրնար արդարև այնչափ բարիք ընել որչափ կ'ընեն չափահաս արք և կանայք, և Աստուած ձեռնէ չի պահանջեր այնչափ : Չկայ սակայն տղայ որ չկրնայ բարի բան մը ընել : Արդ, միթէ այս տարուան մէջ պիտի չաւանուի՞ թէ դուք կը փափաքիք նոր նոր բաներ ընել Աստուծոյ համար : Միթէ ձեզի համար ընելու օգտակար բան չկայ՝ տունը, դպրոցը, ձեր ընկերներուն հետ, օգնելով նաև անոնց որ թշուառ են : Կայ անտարակոյս, միայն եթէ ուզէք փնտռել :

Թող ամէնքս ջանանք ստանալ նոր սիրտ և լաւագոյն կեանք մը վարել այսուհետև, այս նոր տարին յոր մըտած ենք, պիտի ըլլայ մեզ արգարև «Երջանիկ նոր տարի» :

**ՉԻՆԱԿԱՆ ԴԱՐՄԱՆ ԾՈՒՂՈՒԹԵԱՆ**

Չինու տէրութեան ծախիւք Ամբիկա կըթուող Չինացի երիտասարդի մը վրայ լուր արուեստաւ Չինական կա-

ռավարութեան թէ անխոյժ է ուսման : Կառավարութեան կողմէն սա պատասխանը եկաւ. « Դրկեցէք ետ որ գլուխը կարենք » :

Ահա գեղեցիկ պատկեր մը : Այս պատկերին մէջ կը տեսնուի ծերունի հանի մը որ ձեռքի գործը մէկդի թողլով իւր թոռներուն կը պատմէ գեղեցիկ պատմութիւն մը շատ տարիներ առաջ պատահած դէպքի մը վրայ : Փոքր աղջիկներէն երեքն և մանկիկը պատահանէն ներս կը նային, և շատ ուշադրութիւն կ'ընեն ամէն բառի, իսկ կրտսերագոյնն այնչափ փոքր է որ չի հասկնար պատմու-

կեցի, որ ֆրիստոնեայ չէր : Միտնարը և Ափրիկեցին կը ճաշէին նախն արահը, մինչ մարդ մը գալով ըսաւ նաւապետին .

« Տէր, դիտէ ի՞նչ ընծայ պիտի տաք այս անգամ » :

« Լռէ, » ըսաւ նաւապետը մարդուն, քանզի չէր ուզեր յայտնել միտնարին իւր սնապաշտութիւնը :

Միտնարը ջանաց դիտեալ թէ ի՞նչ ըսել ուզեց այն մարդը, բայց չկրցաւ այս մտախն խօսք առնել նաւապետին : Քիչ մը ետքը միտնարը ելաւ նախն տախտակամածին վրայ, և հարցուց հանդանուող մարդոց միոյն .

« Մ'ը կը կենայ դեր » :



թիւնը, և կը զբօնու իւր խաղալիկներով և կատախն ձաղովը : Այս ընտանիքը երջանիկ ընտանիք մը ըլլալու է, և աղայք որ մեծ հայր և մեծ մայր ունին որ անոնց խնամ կը տանին և զուարճալի պատմութիւններ կ'ընեն՝ շատ շնորհակալ ըլլալու են Աստուծոյ այն օրհնութեան համար զոր կը վայելեն, և միշտ հլու և հնազանդ ըլլալու են իրենց մեծ հայրերուն և մեծ մայրերուն :

« Սա հրուանդանը (պոլոն) », ըսաւ մարդը : Եւ ասոր վրայ հեռուեալ խօսակցութիւնը անդի ունեցաւ անոնց մէջ :

« Ի՞նչ է այն հրուանդանին անունը » :

« Ճօհանիպա Նունկոյ (Գիւին քիթ) » :

« Երբ այն կողմէն կ'անցնիք, ի՞նչ ընել տալը էք » :

« Երբ անկէ կ'անցնինք, ընծայ մը կու տանք գիւին » :

« Ի՞նչ կը պատահի եթէ առանց ընծայի անցնիք » :

« Չախորդութիւն կը պատահի. հակառակ հով մը կ'ելլէ, և կամ նաւը կ'ընկզմի » :

« Լաւագոյն ընծան զոր կը մատուցանէք ի՞նչ է » :

**ԸՆԾԱՅ ՄԱՏՈՒՑԱՆԵՆ ԱՍՏԱՆԱՅԻՆ**

Միտնար մը արևմտեան Ափրիկէի մէջ անգամ մը կը նաւարկէր գետի մը եզերքը : Նաւապետն էր սև Ափրի-

« Գիշ մը ծխախոտ : »  
« Ծխախոտ չունիմ : Ուրիշ ի՞նչ բան հաճելի է գիւին : »

« Գիշ մը վառօդ : »

« Ի՞նչպէս կը զրկէք գիւին վառօդը : »

« Նաէն դուրս կը նեաներ , և դեր երկայն բաղկով կը քաշէ կ'առնու : »

« Կրնան ըսել ինձ թէ ո՞ր կը նասի դեր : »

« Այո , սա ծառին տակ , ջուրին մօտ : »

« Կ'ախորժի՞ արդեօք որ վառօդի հետ գնատակ ալ զրկուի՞ » ըսաւ միսին նարը , և իսկոյն պատուիրեց սպասաւորին լեցուն հրացան մը բերել խուցէն : Երբ սպասաւորը բերաւ հրացանը , միսիննարը պարպեց հրազէնը դէպ ի բունն ծառայն : Միսիննարին այս համարձակութեան վրայ ապշեցան նախ մարդիկը , և առ ահին ախի բերան կը սպասէին սոսկալի հարուածի մը , և կամ նախ ընկղմելուն , սակայն ոչինչ պատահեցաւ : Մինչ անվաճանգ կը նստարկէին գեանի վեր , միսիննարը խօսելով անոնց , ցուցուց թէ ի՞նչ մեծ յիմարութիւն էր պաշտել դեր , և յորդորեց զանոնք աղօթել առ ճամբարան Աստուած , որ մեծ է քան զդեր : Միսիննարին այս խօսքերուն սա պատասխանը միայն կը տրուէր . « Մեր հայրերն միշտ այսպէս կ'ընէին : »

Վայրենի կռապաշտից մէջ այսպիսի սնապաշտութիւններ տեսնել զարմանալի չէ . բայց զարմանալի չէ՞ որ Գրիստոնեայ երկիրներու մէջ կը գրանուին անմիտ սնապաշտներ :


ՏԱՐՈՒՆԱԿ ԱՌԱՆՊՈՒԹԻՒՆ ՄԸ

Ամերիկայի Ֆլորիտա նահանգին վայրենի բնակչաց մէջ կայ զարմանալի աւանդութիւն մը սպիտակ մարդոց ծագման և առաւելութեան վրայ : Կ'ըսեն թէ , երբ Մեծ Ողին ստեղծեց զերկիր , ստեղծեց նաև երեք մարդ վայելուչ մարմնով , և գնելով զանոնք փոքր ծովակի մը քով , հրամայեց ջուրին մէջ նետուիլ և լուացուիլ : Մին հնազանդեցաւ , և ելաւ ջուրէն աւելի մաքուր և գեղեցիկ : Երկրորդը վայրկեան մը վարանեցաւ , մինչ ծովակին ջուրը , յողուելով առաջին մարդէն , պղտորած էր . ուստի երբ երկրորդ մարդը մտաւ , եղաւ պղնձագոյն : Երրորդը նետուեցաւ , մինչ արդէն ջուրը սեցած էր տղմով , ուստի և դուրս ելաւ բոլորովին սևացեալ : Յետոյ Մեծ Ողին դրաւ անոնց առջև երեք ծրար , և սև մարդուն


դժբախտութեան վրայ ցաւելով , նախ անոր պատուիրեց ծրարներէն մին ընտրել : Սիւր տեսնելով թէ ո՞րն էր աւելի ծանր , ընտրեց ծանրագոյնը : Պղնձագոյն մարդն ընտրեց մնացեալ երկու ծրարին ծանրագոյնը , թեթևագոյնը թողլով սպիտակ մարդուն : Երբ ծրարները բացուեցան , առաջնոյն մէջ գանուեցան բահ և բրիչ և ուրիշ գործիք մշակութեան . երկրորդին մէջ կային սրսոյ և ձկնորսութեան և պատերազմի գործիք . իսկ երրորդ ծրարին մէջ սպիտակ մարդը գտաւ գրիչ , մեղան և թուղթ , այսինքն գործիք հանճարոյ , և միտքը մշակելու միջոցներ , որ են հիմունք յառաջագիտութեան սպիտակ մարդուն :

Ա. Չ. Բ.

Բոլոր աշխարհի մէջ չկայ բան մ'որ քան աչքն աւելի ցուցնէ Արարչին զարմանալի խմաստութիւնը և ճարտարութիւնը : Աչքին կազմութեան մէջ կան այնպիսի բաներ զորս դժուար է բացատրել այնպէս որ տղայք կարենան հասկնալ , բայց երկու կամ երեք յօդուածներով պիտի ջանամ համառօտութեամբ բացատրել աչքին մասերէն զմանս , և ցուցնել թէ անոնք ինչպէս կը պահպանուին փտանդէ : Որպէս զի մեր բացատրութիւնը դիւրաւ հասկցուի , հոս կը գնենք պատկեր մը որ կը ցուցնէ թէ աչքն ինչպէս պիտի երևէր եթէ վերէն վայր մէջտեղէն կարուէր :



Աչքը գնտակի ձև ունի և դրուած է տեսակ մը պարկի մէջ : Այս պարկին առջևի մասն այնպէս թափանցիկ մորթ է որ լոյսը դիւրաւ կ'անցնի անոր մէջէն : Աչքին պարկին այս մասը պատկերին մէջ 2 թուանշանով ցուցուած է : Աչքին առջևի կազման թափանցիկ մորթին ճիշդ ետին կայ յտակ և հակթի սպիտակոցի նման հեղուկ մը : Այս հեղուկը կը բռնէ պատկերին մէջ տեսնուած ճերմակ տեղը : Նաև այս հեղուկը թափանցիկ է և կը թողու լուսոյ անցնել իր մէջէն դիւրութեամբ : Այս հեղուկին մէջ կայ



կը որ սև վարագոյր մը որ կը կոչուի ծիածան : Պատկերին մէջ ծիածանը ցուցուած է 6 թուանշանով , և գծի մը պէս կ'երևի քանզի կը նայինք առնոր ծայրին : Ուրիշ պատկեր մը դրած ենք ցուցնելու թէ ինչպէս կ'երևի ծիածանը երբ առջևէն նայինք : Այս պատկերին մէջ ծիածանը քիչ մ'աւելի երկար է քան զոր է առաջին պատկերին մէջ : Այս ծիածանը ոմանց աչքին մէջ սև , այլոց աչքին մէջ գորշագոյն և ոմանց աչքին մէջ կապոյտ է : Ծիածանին մէջտեղը 2 թուանշանով ցուցուած փոքր ծակ մը կայ որ կը կոչուի աչքին բիրը : Ծիածանը աչքին զարդն ու գեղեցկութիւնն է , բայց անոր զլխաւոր նպատակն է կանոնաւորել լոյսը որ կը մտնէ աչքին մէջ : Գիտենք թէ երբ մութ սենեկէ մը յանկարծ շատ լուսաւոր սենեակ մը կը մտնենք , մեր աչքը քիչ մը ցաւ կը զգայ , և քանի մը վայրկեան ետքը ցաւը կ'անցնի : Լուսոյ առաւելութիւնն է որ այս ցաւը կը պատճառէ , և երբ ծիածանը զօրաւոր լուսոյ ազդեցութեան ներքև գանուի , բիրը կծկեցնելով կը փոքրկացունէ , և այսպէս չթողուր որ շափէն աւելի լոյս մտնէ աչքը : Երբ լուսաւոր սենեկէ մը մութ սենեակ մը կը մտնենք , գիտենք որ քանի մը վայրկեան առարկաներն ազօս կ'երևին մեզ : Անատեն ծիածանի մկանունքը կը խոշորցնեն բիրը և այսպէս աւելի լոյս կը մտնէ աչքին մէջ և կրնանք աւելի աղէկ տեսնել : Բիրին կծկելով փոքրկանալն և բացուելով խոշորալը կրնանք տեսնել եթէ լուցեալ կանթեղ մը աչքին մօտ բերենք մութ սենեկի մը մէջ , և ապա հեռացունենք կանթեղը :

(Շարունակել)

Ամերիկայի Միսիննարաց ընկերութեան կողմէն  
Խմբագիր ձ. Բ. ԿՐԻՆ  
Ֆիլաճանքլար Բօքուշու . Ամերիգան խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏԱՐՈՒՆԱԿ ԱՌԱՆՊՈՒԹԻՒՆ Ա. ՏԱՐՈՒՆ ԳՈՅԱՃԱՆՏ